



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 24 » հուլիսի 2018թ. N^o 034/02- 779

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ուղարկվում է Սպիտակ համայնքի
ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքներով՝



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ.՝ Ա.Գյուլազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2018թ. N^o 48-Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացը կասեցնելու մասին

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԳՈՌ

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՅՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հուլիսի 23
ք. Սպիտակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2018թ. № 49-Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, հաշվի առնելով, որ «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը Հայ Ամերիկյան ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների սուրբ ծննդի բարեգործական հիմնադրամի և «Մ. Լամբարյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2017 թվականի նոյեմբերի 20-ին կնքել է շինարարության կապալի պայմանագիր, որի համաձայն, իրականացվող շինարարական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և անհրաժեշտություն է առաջացել «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացը կասեցնել մինչև շինարարության կապալի պայմանագրի լուծումը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Ժամանակավորապես կասեցնել «Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացը:

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱԸ (0)

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԳՈՌ

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2018թ. № 50-Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ 127 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2018 թվականի հուլիսի 11-ի թիվ 101/111.1/4124-18 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-006-0478-0004 կադաստրային ծածկագրով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 0,003789 հեկտար էներգետիկայի հողեր գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություններ:

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԳՈՌ

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՅՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

(Handwritten signatures in blue ink)



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հուլիսի 23
ք. Սպիտակ